Հավելված 7

<N ՇՀԱՊՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-15> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

N ՇՀԱՊՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-15 շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հնարավոր

մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ՇՀԱՊՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-15 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն> ՊՈԱԿ***-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ԲԵՆԶԻՆ:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում *<N ՇՀԱՊՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-15 >:*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***ք. Երևան, Մարգարյան 35 հասցեով մինչև 2015թ.-ի ապրիլի 03-ը ժամը 15:00-ն:*** Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վարդուհի Հարությունյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը*:*

Հայտերը կբացվեն *<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն> ՊՈԱԿ*-ի շենքում, ք. Երևան, Մարգարյան 35 հասցեով, դահլիճում 2015թ.-ի ապրիլի 03-ին, ժամը 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն> ՊՈԱԿ-ի կարիքների համար բենզինի ձեռքբերումը:

<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն> ՊՈԱԿ-ի կարիքների համար բենզինի մատակարարման /որը կազմված է 1 չափաբաժնից/ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N1 Հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված N 5/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ /Հավելված N 5.1 /: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***ՈՇՀԱՊՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-15*** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և /կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթի ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքներով՝ Ս. Ղալթախչյան